Արմինե Մուրադյան

Ես վաղը կգամ այնտեղ

Ես վաղը կգամ այնտեղ,

Ուր վաղուց դու էլ չկաս,

Ու կբերեմ քեզ

խոսքերը իմ թաց՝

Հետադարձի ուղիղ ցողելու համար:

Ա՜խ, եթե վաղը մի երեկ դառնար,

Գուցե լինեիր,

Մնայիր գուցե...

Ու նվիրեիր ջրաշուշաններ՝

Իմ սև աչքերի գետերին վարար:

Հետո նստեիր արցունքիս ափին

Ու շշնջայիր այդպես էլ չասված

Խոսքեր հարազատ…

Մի բուռ վերցնեիր լացիցս ճերմակ՝

Ցողելով տխուր-տխուր աչքերիդ...

Անմա՛հ աչքերիդ,

Որտեղ այդպես էլ չկարողացա

Ապրել հավիտյա՛ն...

Ես..... վա՛ղը կգամ....